նութեամբ պատուիրել է Գէորգ Սկեւռացուն մի նոր խմբագիր մեկնութիւն պատրաստել։ Նոր խմբագրածը շուտով հոչակ է ստանում և աւելի տարածուում։ որովհետև մինչդեռ առաջնից մինչև օրս միայն մի ամբողջ օրինակ և մի քանի հատուածներ են յայտնի։ խմբագրուածից ձեռագրեր կան Մայր Աթոռս մատենադարանում։ Վիեննա։ Վենետիկ և գուցէ նաև ուրիշ տեղեր։ Թէ խմբագիրը շատ շուտ է տարածուել։ այդ եզրակացնում ենք նաև նրանից։ որ արդէն 1288 թուականից։ խմբագրելուց գուցէ միայն տասը տասնուհինգ տարի անց։ նրա մի գեղեցիկ օրինակը մեր ձեռն է հասել։ գրուած «ի վանս Յոհաննու սրբոյ Կարապետիս.... հրամանաւ և արդեամբք Տէր Համազ[ասպայ]* ի թուաբերութեան Հայոց ՃԼԷ—1288 բ.»։

Մեր նպատակը չէ այժմ կանգ առնել մեկնութեան կրկնաձև օրինակների վրայ։ ասածներս էլ բաւական են պարզելու մի խնդիր։ որ մեր գրականութեան պատմութեան մէջ կարծիքաւոր էր թողնուած։ Անցնենք Կարապետ եպիսկոպոս «Սասնացւոյ» ներբողեանին։ որի առթիւ և ծանօթացանք Գործք Առաքելոցի մեկնութեան հետ։ Ճառի և նրա հեղինակի մասին մեր ամբողջ ասելիքը հիմնելու ենք միայն նրա բովանդակութեան վրայ։ որովհետև չունինք ուրիշ որ և է տեղեկութիւն։ Կարապետ եպիսկոպոսը այստեղ առաջին և միակ ան-

---

*. Այս այն Համազասպ եպիսկոպոսն է։ որի ժամանակ ծաղկեց Կարբիի մօտ Յոհաննավանքը եւ որի համար գրուել են շատ ձեռագրեր։ ի միջի այլոց Մեծ Սոկրատը։ Դրա մասին տես իմ Սոկրատի հրատ։ յառաջբ։ էջ ԻԲ—ԻԴ։

բ. (Ձեռ։ Մայր Աթոռիս թ։ 1367։ 2։)